**Արձանագրություն N 2-1**
**ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-21/36 ծածկագրով <<Նախադպրոցական հաստատությունների շենքեր. Նախագծման նորմեր>> ՀՀ շինարարական նորմերի մշակման, տեղայնացման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան 20.10.2021թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ռ. Ադամյան
Հանձնաժողովի անդամներ՝ Գ. Ծատուրյան
Մ. Հարությունյան
Վ. Առաքելյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Նիկոլյան
Բացակայում էր գնահատող հանձնաժողովի անդամ՝ Ա. Չավուշյան

## 1. Ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակցի մասին

------------------------------------------------------------------------------------------------------------
(Ռ. Ադամյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ.

ա) Մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

բ) Գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով 20.10.2021թ., ժամը 11:00-ին:

գ) Գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

*ՀՀ դրամ*

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Նախահաշվային գին | Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|---|
| 1 | <<Երևաննախագիծ >> ՓԲԸ | 5 000 000 | 3 991 667 | 798 333 | 4 790 000 |

դ) Մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված չէ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

1.2 Մասնակցի՝ հայտով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Հավելված N1-ը հրավերին պահանջներին համապատասխան չի ներկայացվել, ինչպես նաև ներկայացված չէ իրական շահառուների մասին տեղեկատվությունը:

1.3 Հիմք ընդունելով Կարգ 41-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կասեցնել նիստը և ծանուցել <<Երևաննախագիծ >> ՓԲԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 21.10.2021թ ներառյալ) շտկել 1.2 կետում արձանագրված անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում շտկում ներկայացվելու դեպքում հայտը կգնահատվի բավարար, հակառակ դեպքում այն կգնահատվի անբավարար և կմերժվի:

Արձանագրված անհամապատասխանության վերաբերյալ շտկումն անհրաժեշտ է ներկայացնել <<ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-21/36>> ծածկագրով հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի tender4@minurban.am էլ. փոստին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:*

## 2. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

------------------------------------------------------------------------------------------------

(Ռ. Ադամյան)

Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրվում է արձանագրված անհամապատասխանությունը մասնակցի կողմից շտկելուց հետո, բայց ոչ ուշ քան 22.10.2021թ. ժամը 10:00-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:*

Հանձնաժողովի նախագահ՝ ------------------------------------------------ Ռ. Ադամյան

Անդամներ՝ ------------------------------------------------ Գ. Ծատուրյան

------------------------------------------------ Մ. Հարությունյան

------------------------------------------------ Վ. Առաքելյան

Արձանագրությունը կազմեց հանձնաժողովի քարտուղար՝ ------------------------------------------------ Ն. Նիկոլյան